

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի 2004/103/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Խորհրդի 2000/29/ԵՀ հրահանգի V հավելվածի Բ մասում թվարկված բույսերի, բուսական արտադրանքի կամ այլ առարկաների նույնականության եւ դրանց բուսասանիտարական ստուգումների վերաբերյալ, որոնք կարող են իրականացվել դեպի Համայնք մուտքի կետ չհանդիսացող այլ վայրում կամ մոտակա վայրում, ինչպես նաեւ այդ ստուգումների հետ կապված պայմանների վերաբերյալ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Բույսերի կամ բուսական արտադրանքի կամ այլ առարկաների համար վնասակար օրգանիզմների՝ Համայնք ներմուծման եւ Համայնքում դրանց տարածման դեմ ուղղված միջոցների վերաբերյալ» Խորհրդի 2000 թվականի մայիսի 8-ի 2000/29/ԵՀ հրահանգը¹ եւ, մասնավորապես՝ դրա 13q(2)(դ) եւ 13q(2)(ե) հոդվածները, ինչպես նաեւ 13q(4) հոդվածի չորրորդ եւ հինգերորդ ենթապարբերությունները,

Քանի որ

- 1) 2000/29/ԵՀ հրահանգի համաձայն՝ տվյալ հրահանգի V հավելվածի Բ մասում թվարկված՝ երրորդ երկրներից բերվող բույսերը, բուսական արտադրանքը կամ այլ առարկաներ պետք է սկզբունքորեն ենթարկվեն նույնականության եւ բուսասանիտարական ստուգումների Համայնքի մուտքի կետում կամ մոտակա վայրում.
- 2) Համայնքի ապրանք չհանդիսացող ապրանքների տարանցիկ փոխադրման դեպքում նույնականության եւ բուսասանիտարական այդ ստուգումները կարող են անցկացվել նաեւ նշանակման վայրի պաշտոնական մարմնի տարածքում կամ ցանկացած այլ մոտակա վայրում. որոշակի այլ դեպքերում այդ ստուգումները

¹ ՊՏ L 169, 10. 07.2000թ., էջ 1: Հրահանգը վերջին անգամ փոփոխվել է Հանձնաժողովի 2004/70/ԵՀ հրահանգով (ՊՏ L 127, 29.04.2004թ., էջ 97):

կարող են անցկացվել նշանակման վայրում, ինչպես օրինակ՝ արտադրության վայրում՝ պայմանով, որ առկա են բույսերի, բուսական արտադրանքի կամ այլ առարկաների փոխադրման վերաբերյալ հատուկ երաշխիքներն ու փաստաթղթերը.

- 3) անհրաժեշտ է նշել այն դեպքերը, որոնց ժամանակ նույնականության եւ բուսասանիտարական ստուգումները կարող են անցկացվել նշանակման վայրում.
- 4) փոխադրման ժամանակ վնասակար օրգանիզմների տարածման վտանգի բացառումն ապահովելու նպատակով պետք է սահմանվեն փոխադրմանն առնչվող դրույթներ կամ հատուկ երաշխիքներ եւ փաստաթղթեր.
- 5) պետք է սահմանվեն նույնականության եւ բուսասանիտարական ստուգումների անցկացման նվազագույն պայմանները, որոնք վերաբերում են նշանակման վայրերում ստուգումների անցկացման համար պատասխանատու պաշտոնական մարմինների նկատմամբ կիրառելի տեխնիկական պահանջներին, ինչպես նաեւ այն տեխնիկական կարողություններին, հագեցվածությանն ու սարքավորումներին, որոնք նշված պատասխանատու մարմիններին հնարավորություն են տալիս իրականացնելու նույնականության եւ բուսասանիտարական ստուգումներ.
- 6) անհրաժեշտ է պատասխանատու մարմինների եւ մաքսային մարմինների միջեւ համագործակցության վերաբերյալ մանրամասն կանոններ սահմանել, այդ թվում՝ նշված համագործակցության նպատակով օգտագործման ենթակա փաստաթղթերի տիպային օրինակները, այդ փաստաթղթերի փոխանցման միջոցները եւ տեղեկությունների փոխանակման կարգը.
- 7) սույն Հրահանգով նախատեսվող միջոցները համապատասխանում են Բուսասանիտարական հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Սույն Հրահանգը կիրառվում է Խորհրդի 2000/29/ԵՀ հրահանգի V Հավելվածի Բ մասում թվարկված՝ երրորդ երկրներից բերվող բույսերին, բուսական արտադրանքին

կամ մյուս առարկաներին (այսուհետ՝ կարգավորվող ապրանք): Անդամ պետությունները սույն հրահանգով սահմանված դեպքերում եւ հանգամանքներում կարող են սահմանել, որ 2000/29/ԵՀ հրահանգի 13ա(1)(բ)(ii) եւ (iii) հոդվածում նշված՝ կարգավորվող ապրանքների ստուգումները կարող են իրականացվել այլ վայրում: 2000/29/ԵՀ հրահանգի 13գ(2)(գ) հոդվածում նշված՝ Համայնքի ապրանք չհանդիսացող ապրանքների տարանցիկ փոխադրման դեպքում ստուգումը կարող է իրականացվել նշանակման վայրի պաշտոնական մարմնի տարածքում կամ մոտակա այլ վայրում, եթե բավարարվում են 2-րդ պարբերության մեջ նշված պայմանները: 2000/29/ԵՀ հրահանգի 13գ(2)(դ) հոդվածում նշված դեպքերում, ստուգումը կարող է իրականացվել նշանակման վայրում, ինչպես, օրինակ՝ արտադրության վայրում, եթե բավարարվում են 2-րդ պարբերության մեջ նշված պայմանները:

2.1-ին պարբերության մեջ նշված պայմանները հետեւյալն են.

ա) եթե մուտքի կետի եւ նշանակման վայրի պաշտոնական մարմինները՝ անդամ պետությունների պատասխանատու պաշտոնական մարմինների միջեւ համաձայնությամբ նախատեսված նպատակահարմարության դեպքում, որոշում են կայացնում այն մասին, որ նույնականության եւ բուսասանիտարական ստուգումները (այսուհետ՝ ստուգումներ) կարող են առավել մանրամասն ու ճշգրիտ անցկացվել Համայնքի մուտքի կետ չհանդիսացող այլ վայրում կամ մոտակա վայրում,

եւ

բ) եթե ցանկացած ներկրող կամ այլ անձ, որը պատասխանատու է այն վայրերի կամ տարածքների համար, որտեղ պետք է իրականացվեն կարգավորվող ապրանքներից բաղկացած բեռի ստուգումները (այսուհետ՝ դիմող), ունի 2(2) հոդվածով սահմանված կարգով ձեռք բերված թույլտվություն՝ «ստուգման թույլատրված վայրում» ստուգումների անցկացման համար, որը՝

— 2000/29/ԵՀ հրահանգի 13գ(2)(գ) հոդվածում նշված՝ Համայնքի ապրանք չհանդիսացող ապրանքների տարանցիկ փոխադրման դեպքում պետք է լինի՝

— նշանակման վայրի պաշտոնական մարմնի տարածքը կամ

— այդ տարածքին մոտ գտնվող եւ մաքսային մարմինների ու պատասխանատու պաշտոնական մարմնի կողմից նախատեսված կամ թույլատրված մոտակա վայրը, կամ

— 2000/29/ԵՀ հրահանգի 13գ(2)(դ) հոդվածում նշված դեպքերում պետք է լինի՝

- պաշտոնական մարմնի եւ այն մաքսային մարմինների կողմից թույլատրված նշանակման վայրը, որոնք պատասխանատու են այն տարածքի համար, որտեղ տեղակայված է տվյալ նշանակման վայրը.

եւ

- գ) եթե կարգավորվող ապրանքներից բաղկացած բեռի (այսուհետ՝ բեռ) դեպի ստուգման թույլատրված վայր փոխադրման վերաբերյալ հատուկ երաշխիքները եւ փաստաթղթերն առկա են, եւ, եթե նպատակահարմար է, ստուգման այդ վայրերում նման ապրանքների պահման համար անհրաժեշտ նվազագույն պայմանների հետ համապատասխանությունն ապահովված է:

3. Հատուկ երաշխիքները, փաստաթղթերը եւ նվազագույն պայմանները, որոնք նշված են 2(գ) պարբերության մեջ, հետեւյալն են՝

- ա) բեռի փաթեթավորումը կամ այդ բեռի փոխադրման համար օգտագործվող փոխադրամիջոցը պետք է լինեն փակված կամ կնքված այնպես, որ բացառվի կարգավորվող ապրանքների կողմից ախտահարման կամ վարակի առաջացման հնարավորությունը դեպի թույլատրված ստուգման վայր դրանց փոխադրման ժամանակ, եւ դրանք պետք է այնպիսին լինեն, որ ապրանքների նույնականությունը մնա անփոփոխ: Պատշաճ հիմնավորված դեպքերում անդամ պետությունների համապատասխան պաշտոնական մարմինները կարող են թույլտվություն տալ չփակված կամ չկնքված բեռների համար՝ պայմանով, որ բացառվի կարգավորվող ապրանքների կողմից ախտահարման կամ վարակի առաջացման հնարավորությունը դեպի թույլատրված ստուգման վայր դրանց փոխադրման ժամանակ.

- բ) բեռն ուղարկվում է թույլատրված ստուգման վայր: Ստուգման վայրի փոփոխություն չի թույլատրվում, բացառությամբ մուտքի կետի եւ հայցված նշանակման վայրի համապատասխան պաշտոնական մարմինների, ինչպես նաեւ այն մաքսային մարմինների կողմից թույլտվության դեպքում, որոնք պատասխանատու են այն տարածքի համար, որտեղ տեղակայված է հայցված նշանակման վայրը.

- գ) բեռին կից պետք է լինի «Բուսասանիտարական ուղեկցող փաստաթուղթ» առանց հակասելու 2000/29/ԵՀ հրահանգի 13(1) հոդվածում նկարագրված

հավաստագրերին, եւ որը պետք է պարունակի սույն Հրահանգի հավելվածին համապատասխան պահանջվող տեղեկությունները. փաստաթուղթը պետք է լրացվի մեքենագիր կամ ձեռագիր՝ ընթեռնելի մեծատառերով, կամ էլեկտրոնային տարբերակով՝ մուտքի կետի եւ նշանակման վայրի համապատասխան պաշտոնական մարմինների հետ համաձայնեցված կարգով, եւ, որպես մինիմում, պետք է կազմված լինի Համայնքի պաշտոնական լեզուներից որեւէ մեկով.

- դ) 3(գ) պարբերության մեջ նշված փաստաթղթի համապատասխան վերտառությամբ մասերը պետք է լրացվեն եւ ստորագրվեն բեռը ներկրողի կողմից՝ մուտքի կետի համապատասխան պաշտոնական մարմնի հսկողությամբ.
- ե) 2(բ) պարբերության երկրորդ պարբերությամբ նշված դեպքերում ստուգման համար թույլատրված վայրում բեռը պետք է պահվի այնպես, որ առանձնացված լինի թե՛ Համայնքի ապրանքներից, եւ թե՛ վնասակար օրգանիզմներով ախտահարված ապրանքներից կամ այն ապրանքներից, որոնց համար ախտահարված լինելու կասկած կա:

Հոդված 2

1. Ինչպես նշված է 2-րդ, 3-րդ եւ 4-րդ պարբերություններում, անդամ պետությունները պետք է ապահովեն թույլատրման ընթացակարգ սահմանելը՝ որպես ստուգման թույլատրված վայրեր առաջարկված վայրերում ստուգումների իրականացման բուսասանիտարական նպատակահարմարության գնահատման եւ, համապատասխան դեպքում, հաստատման համար:
2. Առաջին պարբերության մեջ նշված ընթացակարգում պետք է նշվի, որ այն դեպքում, երբ ստուգումները պետք է անցկացվեն ստուգման թույլատրված վայրերում, դիմողը պետք է դիմի նման ստուգումներով զբաղվող համապատասխան պատասխանատու պաշտոնական մարմիններ՝ հայցելով, որ ստուգումներն անցկացվեն դիմումի մեջ նշված վայրերում:
3. Դիմումի մեջ պետք է ներառվի տեխնիկական դոսյե՝ ներկայացնելով որպես ստուգման թույլատրված վայր առաջարկվող վայրերի նպատակահարմարության գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունները, մասնավորապես՝ հետեւյալի

վերաբերյալ՝

ա) տեղեկություններ ներկրման համար նախատեսված՝ կարգավորվող ապրանքների եւ այն վայրերի վերաբերյալ, որտեղ պետք է պահեստավորվեն կամ պահվեն ներմուծված կարգավորվող արտադրանքները մինչեւ ստուգումների վերջնական արդյունքներն ստանալը ու, մասնավորապես, տեղեկություններ այն մասին, թե ինչպես են պահպանվելու 1(3)(ե) հոդվածում նշված՝ առանձնացմանը վերաբերող պահանջները, եւ

բ) նպատակահարմարության դեպքում, եթե կարգավորվող ապրանքները նախատեսված են «բեռի լիազորված ստացող» կարգավիճակն ստացած անձի համար եւ բավարարում են Հանձնաժողովի թիվ 2454/93 կանոնակարգի (ԵՏՀ)¹ 406-րդ հոդվածով սահմանված պահանջները կամ եթե տվյալ վայրերը ենթակա են թույլատրման, ինչպես նշված է հիշյալ կանոնակարգի 497-րդ հոդվածում, դրա մասին վկայող համապատասխան փաստեր:

4. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ 2-րդ պարբերության մեջ նշված դիմումը գրանցվի, եւ որ պատասխանատու պաշտոնական մարմինների կողմից՝

ա) ուսումնասիրվեն դիմումի մեջ ներկայացված տեղեկությունները.

բ) գնահատվի ստուգումների անցկացման նպատակահարմարությունը ստուգման առաջարկվող վայրերում, որոնք պետք է բավարարեն նվազագույն պահանջները, որոնք իրենց հերթին առնվազն պետք է լինեն Հանձնաժողովի 98/22/ԵՀ հրահանգի² հավելվածի 3(բ) եւ (գ) պարբերությունում սահմանված պահանջները, կամ որեւէ այլ հետագա պահանջները, որոնք կարող են ոչ խտրական կարգով սահմանվել անդամ պետությունների կողմից, եւ որոնք հիմնավորված են արդյունավետ ստուգումներ անցկացնելու հնարավորության տեսանկյունից.

գ) պատասխան տրվի դիմողին հետեւյալ եղանակներից որեւէ մեկով՝

i) նշելով, որ դիմումն ընդունելի է, եւ որ տվյալ վայրերը նշանակվել են որպես ստուգման համար թույլատրելի վայրեր, կամ

ii) նշելով, որ դիմումն ընդունելի չէ, եւ ներկայացնելով դրա համար հիմք

¹ ՊՏ L 253, 11.10.1993թ., էջ 1: Կանոնակարգը փոփոխվել է թիվ 2286/2003 (ԵՀ) կանոնակարգով (ՊՏ L 343, 31.12.2003թ., էջ 1):

² ՊՏ L 126, 28.04.1998թ., էջ 26:

հանդիսացող պատճառները:

5. Անդամ պետությունները պահում եւ Հանձնաժողով, իսկ նման պահանջի դեպքում՝ նաեւ անդամ պետություններ են ներկայացնում ստուգման համար թույլատրված վայրերի թարմացված ցանկը:
6. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ պատասխանատու պաշտոնական մարմինները ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, եթե պարզվում է, որ առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են խոչընդոտել իրենց տարածքում գտնվող ստուգման թույլատրված վայրերում ստուգումների անցկացման բնականոն ընթացքը:

Անդամ պետությունները Հանձնաժողովին եւ ներգրավված անդամ պետություններին տեղեկացնում են ստուգման թույլատրված վայրի նկատմամբ կիրառվող պայմանների հետ անհամապատասխանության դեպքերի մասին:

Հոդված 3

Անդամ պետություններն ապահովում են, որ այնպիսի բեռներ ներկրողը, որոնց համար որոշվել է, որ այդ բեռների ստուգումները կարող են անցկացվել ստուգման թույլատրված վայրում, պետք է ապահովի ստորեւ նշված պարտականությունների կատարումը՝ առանց հակասելու Հանձնաժողովի 92/90/ԵՏՀ հրահանգով¹ արդեն սահմանված պարտականություններին.

- ա) ներկրողը պետք է կարգավորվող ապրանքների ներմուծման մասին նշանակման վայրի համապատասխան պաշտոնական մարմնին տեղեկացնի բավականաչափ նախօրոք, իսկ տեղեկացնող ծանուցումը պետք է պարունակի մասնավորապես՝
 - i) ստուգման թույլատրված վայրի անվանումը, հասցեն եւ տեղակայման վայրը.
 - ii) կարգավորվող ապրանքների՝ ստուգման թույլատրված վայր ժամանման համար ծրագրված ամսաթիվը եւ ժամանակը.
 - iii) առկայության դեպքում, 1(3)(գ) հոդվածում նշված բույսերի պաշտպանության վերաբերյալ ուղեկցող փաստաթղթի սերիան ու համարը.

¹ ՊՏ L 344, 26.11.1992թ., էջ 38:

- iv) առկայության դեպքում, 1(3)(գ) հոդվածում նշված բույսերի պաշտպանության վերաբերյալ ուղեկցող փաստաթղթի կազմման ամսաթիվը եւ վայրը.
- v) ներկրողի անունը, հասցեն եւ պետական գրանցման համարը.
- vi) բուսասանիտարական հավաստագրի եւ (կամ) վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրի կամ ցանկացած այլ պահանջվող բուսասանիտարական փաստաթղթի գրանցման համարը.
- բ) ներկրողը պետք է նշանակման վայրի համապատասխան պաշտոնական մարմնին տեղեկացնի «ա» ենթապարբերության համաձայն ներկայացված տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 4

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ստուգման թույլատրված վայրերում անցկացված՝ կարգավորվող ապրանքների ստուգումները բավարարեն նվազագույն պահանջները, որոնք իրենց հերթին առնվազն պետք է լինեն Հանձնաժողովի 98/22/ԵՀ հրահանգի հավելվածի 1-ին, 2-րդ եւ 3(ա) պարբերություններում սահմանված պահանջները, կամ որեւէ այլ հետագա պահանջներ, որոնք կարող են առանց խտրականության սահմանվել անդամ պետությունների կողմից, եւ որոնք հիմնավորված են արդյունավետ ստուգումներ անցկացնելու հնարավորության տեսանկյունից:

Հոդված 5

Անդամ պետությունները կարող են սահմանել լրացուցիչ պահանջներ, որոնք անհրաժեշտ են համարվում՝ առաջարկվող վայրը որպես ստուգման թույլատրված վայր սահմանելու համար:

Հոդված 6

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ համագործակցություն իրականացվի, հնարավորության դեպքում, հետեւյալ սուբյեկտների միջեւ.

- ա) մուտքի կետի պաշտոնական մարմնի եւ նշանակման վայրի պաշտոնական

մարմնի միջեւ.

եւ

բ) մուտքի կետի պաշտոնական մարմնի եւ մուտքի կետի մաքսային գրասենյակի միջեւ.

եւ

գ) նշանակման վայրի պաշտոնական մարմնի եւ նշանակման վայրի մաքսային գրասենյակի միջեւ.

եւ

դ) մուտքի կետի պաշտոնական մարմնի եւ նշանակման վայրի մաքսային գրասենյակի միջեւ՝ ներկրվող բույսերի, բուսական արտադրանքի կամ այլ առարկաների, դրանց փաթեթավորման եւ փոխադրամիջոցի վերաբերյալ համապատասխան տեղեկությունների գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով, փոխանակման միջոցով՝ օգտագործելով 1(3)(գ) հոդվածում նշված բույսերի պաշտպանության վերաբերյալ ուղեկցող փաստաթուղթը:

2. Եթե կարգավորվող ապրանքների՝ Համայնք մուտք գործելու կետը եւ ստուգման թույլատրված վայրը տեղակայված են տարբեր անդամ պետություններում, բեռը կարող է ուղարկվել ստուգման թույլատրված վայր, եւ ստուգումները կարող են իրականացվել այնտեղ տվյալ անդամ պետությունների պատասխանատու պաշտոնական մարմինների միջեւ համաձայնության հիման վրա: Տվյալ անդամ պետությունների պատասխանատու պաշտոնական մարմինների միջեւ համաձայնության մասին վկայող գրառումը պետք է առկա լինի բուսասանիտարական փաստաթղթում:

3. Ապրանքները ստուգման թույլատրված վայրում ստուգում անցնելուց հետո, նշանակման վայրի պաշտոնական մարմինը դրա մասին հավաստում է բույսերի պաշտպանության վերաբերյալ ուղեկցող փաստաթղթում՝ դնելով ծառայողական կնիքը եւ նշելով 2000/29/ԵՀ հրահանգի 13ա(1)(բ)(ii) եւ (iii) հոդվածում նշված նույնականության եւ բուսասանիտարական համապատասխան ստուգումների ամսաթիվը: Այդ ստուգումների վերջնական արդյունքները ներկայացվում են «Որոշում» վերտառությամբ վանդակում: Այս դրույթը կիրառվում է համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), եթե ապահովվել է նաեւ 2000/29/ԵՀ հրահանգի 13գ(2)(ա) հոդվածում նշված փաստաթղթային ստուգումների հետ համապատասխանությունը:

4. Եթե 3-րդ պարբերության մեջ նշված ստուգումների արդյունքում տրվում է «Բացթողում» եզրակացությունը, ապա բեռը եւ բույսերի պաշտպանության վերաբերյալ ուղեկցող փաստաթուղթը ներկայացվում է «ստուգման թույլատրված վայրի» տարածքի համար պատասխանատու մաքսային մարմիններ, բեռի մաքսային ձեւակերպումների այն ընթացակարգերի իրականացման համար, որոնք նշված են 2000/29/ԵՀ հրահանգի 13(1) հոդվածում: Այլեւս չի պահանջվում, որ բույսերի պաշտպանության վերաբերյալ ուղեկցող փաստաթուղթը կցված լինի բեռին,

եւ այդ փաստաթուղթը կամ դրա օրինակը առնվազն մեկ տարի պահվում է նշանակման վայրի պաշտոնական մարմնում:

5. Եթե 3-րդ պարբերության մեջ նշված ստուգումների արդյունքում առաջանում է Համայնքի ներսում գտնվող կարգավորվող ապրանքները Համայնքից դուրս գտնվող նշանակման վայր տեղափոխելու պարտականություն, ապա դրանք մնում են մաքսային հսկողության տակ՝ մինչեւ ապրանքների վերաարտահանման իրականացումը:

Հոդված 7

Սույն Հրահանգը պետք է վերանայվի ամենաուշը մինչեւ 2007 թվականի հունվարի 1-ը:

Հոդված 8

1. Անդամ պետությունները պետք է ամենաուշը մինչեւ 2004 թվականի դեկտեմբերի 31-ն ընդունեն եւ հրապարակեն սույն Հրահանգի հետ համապատասխանության ապահովման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական ակտերը: Նրանք պետք է անհապաղ Հանձնաժողովին փոխանցեն այդ ակտերի տեքստերը եւ դրանց դրույթների ու սույն Հրահանգի համեմատական աղյուսակը:

Անդամ պետությունների կողմից պետք է այդ դրույթները գործողության մեջ դրվեն 2005 թվականի հունվարի 1-ից:

Անդամ պետությունների կողմից այդ դրույթների ընդունման դեպքում, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց

պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղման կարգը որոշվում է անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ներպետական իրավունքի այն դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 9

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 10

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2004 թվականի հոկտեմբերի 7-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Դեյվիդ Բիրն

Հանձնաժողովի անդամ

ՀԱՎԵԼՎԱԾ

1. Բույսերի պաշտպանության վերաբերյալ ուղեկցող փաստաթուղթ՝ Հանձնաժողովի 2004/103/ԵՀ հրահանգի 1(3)(գ) հոդվածում նշված	2. ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵԿՑՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ թիվ ԵՀ /.../...¹
3. <u>Բեռի նույնականացում</u>² – Այս բեռը պարունակում է բուսասանիտարական նշանակության արտադրանք — Բույս, բուսական արտադրանք կամ այլ առարկա (TARIC կոդը).	
4. Ներկրողի պետական գրանցման համարը	
5.1. <u>Մուտքի կետ.</u>	5.2. Մուտքի կետի պաշտոնական մարմնի մակագրությունը (ամսաթիվը, անունը, ծառայողական կնիքը եւ ստորագրությունը)
6. Ստուգման համար թույլատրված վայրը (վայրերը)³ Ա - Բ - (փոխարինում է Ա-ին)	
Բույսերը, բուսական արտադրանքը կամ այլ առարկաներ տեղափոխվում են ստուգման վերոնշյալ վայրը (վայրերը) ստորեւ նշված սուբյեկտների միջեւ համաձայնությանը	
Բեռը չի կարող տեղափոխվել վերը նշված վայրերից բացի ուրիշ այլ վայր, եթե դրա	

¹ Հղում անել երկրի կոդին /համարին:

² Լրացնել վանդակը կամ հղում անել բուսասանիտարական հավաստագրի մասին տվյալներին, որը պետք է կցված լինի:

³ Հղում անել «Գ» կետին (2000/29/ԵՀ հրահանգի 13գ(2)(գ) հոդված) կամ «Դ» կետին (2000/29/ԵՀ հրահանգի 13գ(2)(դ) հոդված):

⁴ Հնարավորության դեպքում, ներկայացնել մասրամասն տվյալներ անդամ պետությունների պաշտոնական ծառայությունների միջեւ համաձայնության վերաբերյալ, կա՝մ կոնկրետ դեպքերի համար ձեռք բերված համաձայնության կա՝մ ավելի երկարատեւ ժամկետով համաձայնության վերաբերյալ:

Վայր/ամսաթիվ	Վայր/ամսաթիվ	Վայր/ամսաթիվ
10. <u>Որոշում</u> ☐ Բացթողում Վայր/ամսաթիվ..... Անուն.....		